



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2016 թ. նոյեմբերի 3-4-ը Երևանում տեղի կունենա «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» խորագրով երկրորդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձին: Գիտաժողովի ուղղությունները՝ պատմություն, քաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, իրավագիտություն, հոգեբանություն, սոցիոլոգիա:

**Գիտաժողովի կազմակերպիչն է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետը:**

Հոդվածները տպագրվելու են գիտական ժողովածուի տեսքով և պետք է ներկայացվեն հետևյալ չափանիշներով՝

- համապատասխանեն գիտաժողովի խորագրին,
- պետք է տպագրված կամ տպագրության ուղարկված չլինեն,
- հոդվածներ կարող են ներկայացնել նաև ասպիրանտներ՝ գիտական ղեկավարի կամ համապատասխան ամբիոնի երաշխավորությամբ,
- հոդվածները կարող են լինել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,
- հոդվածի վերնագիրը գրել գլխատառերով, վերնագրից հետո՝ հոդվածի հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, բանալի բառերը՝ 5-7 բառ, որից հետո հոդվածի բովանդակությունը,
- հոդվածի ներածական մասում պետք է ներկայացվի թեմայի նորույթը,
- բոլոր ծանոթագրություններն ու հղումները պետք է տրվեն տողաբար,
- հոդվածը պետք է ունենա հայերեն, ռուսերեն, անգլերեն ամփոփումներ,
- հոդվածը պետք է ունենա A4 (210x297) չափի տպագիր 4-8 էջ ծավալ, վերևից, ներքևից, աջից և ձախից՝ 20 մմ,
- տառատեսակը՝ հայերենը՝ GHEA Grapalat, ռուսերենը և անգլերենը՝ Times New Roman, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, տողերի հավասարեցումը՝ աջ և ձախ կողմերին՝ առանց տողադարձի,
- յուրաքանչյուր հոդվածի վերջում հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով պետք է ներկայացված լինի հեղինակի մասին տեղեկատվություն՝ գիտական կոչում, ասպիրանտ, պաշտոն, կազմակերպություն, գիտական հետաքրքրությունների շրջանակ, էլեկտրոնային հասցե,
- բոլոր հոդվածները պետք է էլեկտրոնային տարբերակով ուղարկվեն մինչև **2016 թ. սեպտեմբերի 30-ը** [conferencehistoryam@gmail.com](mailto:conferencehistoryam@gmail.com) էլեկտրոնային հասցեով,
- լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք գրել կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +374-99-60-27-16:

ՀՊՄՀ Պատմության և  
Իրավագիտության  
Ֆակուլտետ

